

«ՄԵՏԵՈՐԱ» ՊԱՐՔԵՐԱԿԱՆԸ

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Զմյուտնիան (Իզմիր) երկար ժամանակ եղել է դադութահայ խոշոր օջախներից մեկը։ Անցած դարում այդտեղ էր կենտրոնացել արևմտահայ մտավորականների մի ստվար ջոկատ, որը զարկ էր տալիս հայ մշակույթի զարգացմանը։ Ծովափնյա այդ քաղաքը հանդիսացել է, մասնավորապես, հայ մամուլի աչքի ընկնող ծննդավայրերից մեկը։

Զմյուտնահայ մամուլի պատմության մեջ իր յուրահատուկ տեղն ունի արևմտահայ ճանաչված մտավորական Գրիգոր Մսերյանի և հայտնի բանասեր, թարգմանիչ, բառարանագիր Մեսրոպ Նուպարյանի հրատարակած «Մետեորա» պարբերականը (1880—1883)։

Պարբերականը ուներ հետևյալ ենթավերնագիրը. «Գիտական, ազգային և գրական հրատարակություն», իսկ ենթավերնագրի տակ տեղավորված ոչ մեծ նկարը պատկերում էր մթա՝ մած երկնակամարը՝ պատռված կայծակի շեշտակի ճալթյունից։ Ըույսը, գիտությունը կցրեն խավարը, այս էր ալեգորիկ նկարի իմաստը։

Հանդեսի անդրանիկ համարի հրապարակ գալը արժանացել է դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչների ուշադրությանը։ Հակոբ Պարոնյանը այդ առթիվ ջերմությամբ գրել է. «Մետեորա երջանիկ օրեր, հաջողություն, առատ բաժանորդներ և հարատևություն կմաղթեմ ինչ»։ Արձագանքելով նոր պարբերականի երևան գալուն, «Արևելյան մամուլը» հատկապես շեշտել է նրա գիտական ուղղությունը, ասելով թե՛ «մինչև ցարդ մեր մեջ, թող գիտական նյութերու, նույնիսկ անոնց անվան մեծ կարևորություն տվող չկար»։

Ինչպես երևում է պարբերականի հրատարակիչ-խմբագիր Գ. Մսերյանի «Երկու խոսքից», «Մետեորան» տարվա ընթացքում պետք է լույս տեսներ մի քանի համար՝ նպատակ ունենալով «քանի մ'արժանավոր բարեկամներու այլ և այլ երկասիրությունները ի մի» ամփոփել։ Գիտական, ազգային և գրական նյութերից բացի «Մետեորայում» նախատեսվում էր զետեղել նաև քննական, վիպական երկասիրություններ ու թարգմանություններ, որոնք պետք է համապատասխանին «ամեն կարգի ընթերցողներու ճաշակին»։ Իր գլխավոր նպատակը հանդեսը համարում է «ժամանակիս ոգուն և նվիրպայի գիտական շարժման արձագանք ըլլալը»։

«Մետեորան» բացվում է ազգային-Ֆենական բաժնով, ուր հանդեսի հրատարակիչ-խմբագրող գերազանցապես տեղավորում է ինքնուրույն հոդվածներ։ Դրանով էլ այդ բաժինը տարբերվում է մյուսներից, որոնք մեծ մասամբ թարգմանական նյութերի հիման վրա են ստեղծված։ Պարբերականի գլխավոր բաժիններից է՝ գլխավաճը։ Այստեղ շարունակաբար հրատարակվել է «Վարդապետություն իրականին» գիտական հանրամատչելի, հարց ու պատասխանի ձևով շարադրված ծավալուն աշխատությունը, որի տպագրությունը, սակայն, հանդեսի փակման պատճառով մնացել է անավարտ։ «Մետեորայի» պատմական ընույթի նյութերից հատկապես արժեքավոր է հունական ազգային-ազատագրական շարժումներին նվիրված պատմա-գեղարվեստական ակնարկը։ Պարբերականի համար ընդորոշ են վիպական բաժնի նյութերը, որոնք տողորված են հակակղերական, հակակաթոլիկական ընդդժմած գաղափարախոսությամբ։ Այստեղ նաև հրատարակվել է գերմանական մեծ գրող Գյոթեի հանճարեղ երկի՝ «Ֆաուստի» առաջին մասի ամբողջական, անդրանիկ թարգմանությունը հայերեն։ Պարբերականն ունեցել է նաև այլ բաժիններ։

Ամբողջության մեջ վերցրած «Մետեորան» արմատախի տպավորություն է թողնում։ Անկախ դրանից հանդեսը արժարժել է արևմտահայ իրականության առաջադրած մի շարք խնդիրներ, արտացոլել է զմյուտնահայ որոշակի շրջանների մտայնությունները և դրանով իսկ ստացել թուրքա՝ այ կյանքի մասին դադափար տվող ուրույն վավերագրի նշանակությունը։

Հանդեսը ծառանում էր հին մտածելակերպի դեմ, պաշտպանում նորը, գիտության նվաճումների վրա հենվող աշխարհայնյոդությունը, հանդես գալիս հայ ազգի ինքնուրույնության ու ազատ զարգացման տեսանկյունից, դիմագրավում հարստահարությունը և ազգային խտրական-

նությունը, պաշտպանում ժողովրդի վիճակի բարելավման պահանջները։ Նրա աշխատակիցները ձգտում էին հանդեսի էջերում քննարկել ժամանակաշրջանի առաջադրած գլխավոր պրոբլեմները և ընդգծել դրանք։ Գլխավորը, ասում է պարբերականը, «նյութական և աշխարհային կյանքով» զրադվելն է և ոչ թե կրոնական հայացքների ջատագովությունը։ «Մեր ապագան մեզմե, այսինքն մեր անհատական և հավարական ջանքեն կախում ունի, հայեր», — կոչ էր անում նա սուլթանական Թուրքիայի լծի տակ ճնշվող հայությունը, ասելով թե հույսը չպետք է գնել աստծո ողորմածության վրա, չպետք է փրկություն սպասել մեծ տերություններից։

Գղերական-պահպանողական հոսանքի գաղափարախոսության և պապականության նկատմամբ «Մետեորայի» բացասական-քննադատական վերաբերմունքի դրսևորումն է «Յովհաննա Բարուհին» երգիծական վեպի տպագրությունը։

Իր ժամանակին մեծ ազդուկ հանած այդ երկի հույն հեղինակ Հմմանուկ Ռոիգիսը (1835—1904) հայտնի է իրրե հոռոմեական կղերականության կատաղի և խայթող հակառակորդ, XIX դարի հունական տաղանդավոր հրապարակախոս ու քննադատ։ Նա առաջիններից մեկն էր, որ համարձակ կերպով կանգնեց հունական ժողովրդական լեզվի պաշտպանության դիրքերում, պրոպագանդեց ազգային ինքնությունը զարգացման գաղափարը։ Երբ նրա դեմ ծառացավ հունական ուսուցիչները, մարտնչող գրողը ոչ միայն չընկճվեց, այլ նոր, հոռոմե գրողներ կատարեց նրա դեմ։ Ռոիգիսն ամենայն համարձակությամբ առաջ քաշեց կյանքի սոցիալական վերափոխման խնդիրները։ Երկրի դրության բարելավման և ինքնությունը գրականություն ստեղծելու միակ ուղին, — ասում է նա, — կյանքի և սոցիալական պայմանների բարելավումն է։

«Յովհաննա Բարուհին» երկի դեմ ոտքի ելավ կղերականությունը։ Հունական սինոդը բանադրեց վեպը, նրա հեղինակին հույակեց իրրե ատժույն անարգող և «եթև ձեռքն» դար ողջ ողջ պիսի ալերը գանի»։ Այդ ամենը, սակայն, չվակեց երկի ձանապարհը։ Այն հրատարակվեց բազմաթիվ լեզուներով (նաև ռուսերեն), իսկ «Մետեորայի» առաջին համարից սկսած նաև հայերեն։

Հույն հեղինակի այդ հուշակված երկի թարգմանությունն ու հրատարակության անհրաժեշտությունը (Բ. Մանրյանի տպարանում այն տպագրվել է նաև առանձին գրքով) բխում էր «Մետեորայի» և նրա աշխատակիցների ընդհանուր գաղափարախոսությունից։

Հեղինակն իր երկի հիմքում դրել է այն լեզունը, թե միջնադարում, երբ «բարերու (պապերի — Մ. Հ.) քնտրությունը խառնաշփոթ բան մ'էր, ուր պոռնիկները միայն կիշխեին», «խորամանկ, վարպետ և հանդուգն կին մը», տղամարդու զգեստներ հագած, կարողացավ «տգետ, անբան և գինովութենն նվաստացած քահանաները խաբելով» կաթոլիկ եկեղեցու գերագույն իշխանավորի աստիճանին հասնել՝ պապ ընտրվել։ Իր երկին պատմական ստեղծագործության բնույթ տալու նպատակով Ռոիգիսը կցում է մի ներածություն, ուր միջնադարյան եկեղեցին իր բոլոր մեկություններով նկարագրում է պատմական նյութի հիման վրա։ Ապա նա անցնում է Բարուհու պատմության նկարագրությանը, նախապես ընթերցողին հայտնելով, որ իր երկի «ամեն մեկ մասը, գրեթե ամեն մեկ բառը», ամբողջ պատմությունը, նույնիսկ «զգեստի կամ կերակուրի ամեն նկարագիրները մանրամասն կերպով ճշմարիտ են»։ Ընթերցողը լիովին հավատում է հեղինակին և հետաքրքրությամբ կարդացվող վեպը նրա առաջ բաց է անում կաթոլիկական եկեղեցու, կրոնավորների բոլոր աշխատակությունները, նրանց կյանքի «ամենն աղտոտ և զազիր» էջերը, չեն չպրտելով կրոնական ծածկարողը՝ վեղարը, մերկացնում է կաթոլիկական հոգևորականությանը և երկրի վրա «աստծո փախանորդներին» պապերին ու նրանց «ծաղրելի և ալանդակ գործերը»։

Կաթոլիկական եկեղեցու բարբեր քննադատելով ու սուր ծաղրի ենթարկելով բարձրաստիճան հոգևորականությանը, հեղինակը ցույց է տալիս, թե որպիսի ալանդակ կարգեր են իշխում կաթոլիկական հիմնարկներում։ Կաթոլիկ կրոնին ծառայող իշխանավորները, առանց բացառություն, որևէամուլ են ու ցանկասեր, խիստ ազահ են ու փողասեր։ Նրանց մոտ չկա ոչ մի սրբություն, կեղծ է նրանց բարեպաշտությունը։ Հավատացյալներին խաբելու համար է հորինված սրբորների պաշտամունքը, սուտ են հրաշագործ համարվող մասունքները։ Ընկվիզիցիան, ինչպես նաև կրոնական խորհուրդները պետք է մերժել, իրրե պատժի ու բարբարոսություն, իրրե մոլորեցնելու ու խաբեության ալանդակ միջոցներ։ Տալով իր հերոսուհու անցած ողջ ուղին հեղինակը պսակավերծ է անում հոգևորականության ստոր ու ալանդակ վարքագիծը։ Ընթերցողի առջև ուրվագծվում է պապերի և ստորին ու բարձրաստիճան մյուս հոգևորականների ցոփ ու շվայտ կյանքը, նրանց ալասելված կենցաղը, ծայրաստիճան ազահությունը։

Գարեոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ երկի կծու քննադատությունն ուղղված էր ֆեոդալական սիստեմի մի այնպիսի խոշոր կենտրոնի դեմ, որպիսին Հռոմի կաթոլիկ եկեղեցին։

էութեան ֆեոդալական այդ ամենախոշոր տիրակալի դեմ ուղղված սույն երկի նշանակությունը ինքնին խոշոր է, որովհետեւ, ինչպես էնդելսն է մատնանշում, «Նախքան յուրաքանչյուր առանձին երկրում աշխարհիկ ֆեոդալիզմի դեմ պայքարի բռնվելն անհրաժեշտ էր խորտակել նրա այդ կենտրոնական սրբազան կազմակերպությունը»՝ հումեական կաթոլիկ եկեղեցին, որը «ֆեոդալական կարգը շրջապատել էր աստվածային օրհնության լուսապսակով»:

Կասկածից դուրս է, թե ինչպիսի ուժեղ ներգործություն կարող էր ունենալ այս երկի հայերեն հրատարակությունը մի այնպիսի երկրում, ուր կաթոլիցիզմն իր հենարաններն ուներ, ուր կրոնն ու եկեղեցին գործիք էին դարձել աշխատավորության ձեռքն ու կեղեքման համար: Նրա հրատարակումը մարտահրավեր էր՝ ուղղված թուրքահայ ռեակցիային:

«Մետեորայում» բավական մեծ տեղ է բռնում միսիոներականության, մասնավորապես ամերիկյան միսիոներների դեմ ուղղված պայքարը: Նոր չէր պայքարը թե՛ միսիոներականության, և թե՛ ամերիկյան միսիոներների դեմ: Այն սկզբնավորվել էր «Մետեորայի» երևան գալուց շատ առաջ: Կրոնական քարոզի պատրվակով երևան եկող միսիոներների դեմ հայ իրականության մեջ պայքարը ծավալվել է գրեթե նրանց մասսայաբար հայտնվելու հետ միասին և ուժեղացել է նրանց գործունեության ակտիվացման զուգընթաց: Միսիոներները հազար ու մի երանգներով քողարկվելով ուղի էին հարթում գաղութատիրության համար, փայփայում հայ ժողովրդին ասիմիլյացիայի ենթարկելու պլաններ: Եվ թուրքահայ պայմաններում միսիոներության դեմ՝ մղված պայքարը պայքար էր հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազգային ինքնությունության, քաղաքական ամբողջության համար:

Ձմյուռնիայում ևս միսիոներության դեմ ուղղված պայքարն ուներ պրոգրեսիվ-քաղաքական նշանակություն և մի կողմից ուղղված էր գաղութատիրական-ասիմիլյատորական, մյուս կողմից՝ հայ ազգի միասնության խախտման քաղաքականության դեմ:

Հայ մամուլի էջերում ամերիկյան միսիոներների դեմ ուղղված նյութեր շատ կան («Մեղու», «Ծաղիկ», «Փարիզ», «Մասիս» և այլն): Նրանց մերկացրել են Մ. Նալբանդյանը և դեմոկրատական հոսանքի մի շարք ուրիշ ներկայացուցիչներ: Հայտնի է ամերիկյան միսիոներների դեմ ուղղված այն սուր պայքարը, որ ծավալել է Արմենակ Հայկունին, ուի հակակրոնական որոշ գաղափարները, ինչպես դա կերևա ստորև, արձագանք գտան «Մետեորայում»:

80-ական թվականներին ամերիկյան միսիոներների և նրանց պարագլուխների դեմ հանդես գալով «Մետեորան» գնաց այն նույն ուղիով, որ նրանից առաջ բացել էին դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները: Ինչպիսի պատահական չէ, որ պարբերականում տեղ է գտել ամերիկյան միսիոներների պարագլուխ Վուտին մերկացնող քննադատությունը ու միաժամանակ պաշտպանվել են Մալուստ Կոստանդյանի աթեիստական հայացքները, սուր հարձակումների ենթարկված նրա հայտնի երկասիրությունը:

«Մետեորայի» առաջին համարում տեղավորված է «Հորոյ» ծածկանունով հանդես եկող հայ հրապարակախոսի և ամերիկյան միսիոներների պարագլուխ միստեր Վուտի միջև ծավալված սուր բանավեճի մասին: «Մասիսում» (N 2189) տպագրված իր հակիրճ նամակում Հորոյը ձայն է բարձրացրել բողոքական մի եկեղեցում կարդացված քարոզների դեմ, որոնք «մեծավ մասամբ ճիշտ չէին»: Ըստ որում բողոքական քարոզիչի թույլ տված անճշտություններից մեկն այն էր, որ նա «ամենաջերմեռանդ կաթոլիկի մը նման դատափետեց 89-ի գաղղիական մեծ հեղափոխությունը»: Մերկացնելով «պատվելի» ատենաբանությունները՝ Հորոյը հերքում է նաև ֆրանսիական ռևոլյուցիայի մասին նրա հայտնած կարծիքը և գտնում, որ այն «առաջինը զարկ տվավ հավատարմության, խղճի ազատության և այլ նմանօրինակ անմահ սկզբանց»:

Հորոյի դեմ հանդես գալով, ամերիկյան միսիոները խոսում է հանցանքի մեջ բռնվածի պես, զգուշությամբ ու շաղակրատելով, միսիոներներին ներկայացված սուր մեղադրանքները շրջանցելով, ձգտում է սիրաշահել հայ լուսավորչականներին, վարդապույն է ներկայացնում ամերիկյան միսիոներների Պորտ ընկերության գործունեությունը:

Կրկին հանդես գալով Հորոյը միսիոներական ընկերության «պատվելի նախագահի» փաստաբանություններից քարքարի վրա չի թողնում: «Միսթր Վուտ և ամերիկացի միսիոնարը» խորագրով բանավեճական-հրապարակախոսական իր ընդարձակ հոդվածում նա հայ ընթերցողների առաջ պսակադրած է անում պատկապատ ընկնող «մութ խոսքեր և պատիժ ձևեր» գործածող միսիոներ ընդդիմախոսին: Իր պատասխանը առանձին կետերի բաժանելով նա հրապարակախոսի վարպետությամբ մերկացնում է «պատվելի» բոլոր գրույթները: Միսիոներները հայության նկատմամբ ոչ մի ծառայություն չեն մատուցել, ավելին՝ նրանք հայ լուսավորչականների շրջանում ոչ մի անելիք չունեն: Նրանց հիմնած դպրոցները հայ պատանիներին ու աղջիկներին ոչ թե երթություն տալու օջախներ են, այլ «հատկապես բողոքականությունը ծավալելու դիտմամբ

պատրաստված մեկ մեկ վառարաններ են»։ Նրանց հրատարակություններում հայերը շարախոսվում, զրպարտվում են, իսկ թուրքական հարստահարիչները երևան են բերվում իբրև բարերարներ։ Ապարդյուն է անցել թուրքականների բոլոր ջանքերը՝ հազար ու մի եղանակներով և մեթոդներով հավատափոխ անել մյուս ժողովուրդներին։ Դրա համար անգոր գտնվեց նույնիսկ Անգլիան, որը «քաղաքական մեծ շահ կսպասեր» միսիոներությունից։ Ամբողջ Արևելքում՝ Չինաստանում, Հնդկաստանում, Զուլուստանում և այլ երկրներում միսիոներները խայտառակ պարտություն կրեցին։

Ավելի ցասումնալից է դառնում Հորոյի գրիչը, երբ նա անցնում է քրիստոնեության ու ավետարանի ջատագովության մերկացումներին։ Կեղծիք են այն պնդումները, թե ավետարանը դարձել է ժամերիկյան բարգավաճման և ճշմարիտ ազատության հիմն ու նեցուկը»։ Այդ են վկայում փաստերը, որոնք հեղինակը մեկ առ մեկ շարտում է «պատվելի» միսիոներների դեմքին։ «Լուսավորչալ աշխարհի բարգավաճումը, ժողովրդոց ազատության, ընկերական վիճակին բարձրացումն, օրինաց հավաքությունը, — գրում է Հորոյը, — ժԸ դարու գաղիական իմաստասիրաց գրչին և նորա արդյունք եղող մեծ հեղափոխության» պտուղներն են, իսկ մինչ XVIII դ. «ստրուկ և գերի դարձած էր ժողովուրդը հանուն կրոնի և աստվածապետության»։

Սուր ու մեղկացնող է Հորոյը, երբ խոսում է դպրոցական խնդրի մասին, երբ շոշափում է քաղաքական անկախությունը կորցնելուց։ Նետո հայերին սպառնացող նաև հոգևոր անկախության կորստի հարցերը։ Ավելի ևս ընդարձակելով իր արծարծած խնդիրների շրջանակը, նա հանդիմանում է այն հայ հնօրյա թարգմանիչներին, որոնք դեռ 14 դար առաջ շրջելով Հունաստանում և Ալեքսանդրիայում աստվածաշունչը որոնելու և թարգմանելու խնդրով են զբաղվել։ Առավել օգտակար կլիներ դեռ այն ժամանակ Հայաստան ներմուծել Թուրքիոյից և Տակիտոսի երկերը, եթե լսեին և կարգային հայք սպարտացող սրենքները, Մարական և Պունիկյան պատերազմները, աթենացի անկախության ոգին, Դեմոսթենի ճառերը ևն», այդ դեպքում, եզրակացնում է նա, «թերևս հայոց հոգուն և մտաց վրա ուրիշ ազդեցություն առաջ դար»։

Իր միտքն այլարանորեն հայ ընթերցողին վարպետությամբ հաղորդող հրապարակախոսն այս դեպքում ավելին է ասում, քան կաբելի էր անել համիդյան դաժան ու ամեն ինչի վրա կասկածող գրքանություն պայմաններում։

Ամերիկյան միսիոներների և նրանց պարագլխի դեմ ուղղված սույն արժեքավոր հոդվածի ստուկ տպագրությամբ Գ. Մսերյանը չի բավարարվել։ «Մետեորայի» հրատարակիչը «Սյունի» ծածկանվամբ հիշյալ նյութերին կցել է մի ոչ մեծ նախաբան, ուր նա ոչ միայն իր վերաբերմունքն է արտահայտում, այլև ընդգծում Հորոյի կարևոր մտքերը։ Այդ նախաբանը Գ. Մսերյանի աշխարհայեցողության մի շարք կողմերը պարզելու համար պերճախոս վավերագիր է։ Նրանում «Մետեորայի» հրատարակիչը մատնանշում է «վերջին տարիներին» հայոց բարոյական և մտալոր կյանքում կատարված լուրջ փոփոխություններ, նկատի ունենալով ազգային ինքնագիտացության արթնացումն ու ազատ մտածողության երևան գալը։ Նա ողջունում է ազատ քննադատության ձգտումը և պաշտպան կանգնում «մերթ խիստ մթին» մերթ շարաշար և մերթ ողորմելի քննադատությանը ենթակա եղած» մի շարք հրատարակությունների, այդ թվում նաև՝ Ի. Կոստանդյանի աթևիստական հայացքների հանրագումարը հանդիսացող, «այնքան աղմուկ հանած» «Մեթոդին վրա» գիրքը։

Մսերյանը Հորոյի նամակները գնահատում է իբրև «մեղմ լեզվով» գրված պատասխան, իսկ հեղինակին բնութագրում որպես «ազատամիտ հայ մը, որ իր համազգիներու իրական պիտույքը՝ ճանաչելով անոնց փրկությունը և բարոյականությունը կրոնասիրութենե դուրս կտեսնէ և արդարացի համոզմամբ կհայտարարէ թե հոգևոր փրկության համար գրված Ս. Դիրքը աշխարհային փրկության առաջնորդ չի կրնար ըլլալ, և թե արդեն անով շատ զբաղած ըլլալնու հիմա նյութական և աշխարհային կյանքով զբաղվելու պետք ունինք»։ Հորոյի արտահայտած այս մտքերը, որ ընդգծում է Մսերյանը, ուղղակի աղերս ունեն Ա. Հայկունու այն մտքերի հետ, որ նա արտահայտել է նախ «Պեղասցյան թռչնակում», ապա Ստեփան Փափազյանի դեմ ունեցած բանավեճի ընթացքում։

Հոռմեական կաթոլիկ եկեղեցու պաշտոնյաների, այդ թվում նաև պապերի մերկացումներն ու ծաղրի ենթարկելը, ինչպես նաև ամերիկյան միսիոներների դեմ մղված սուր պայքարն ու նրանց ներկայացուցիչներին դիմակազերծ անելը «Մետեորայի» գնահատելի ավանդն է 80-ական թվականների հայ առաջադեմ ուժերի ընդհանուր պայքարում։

«Մետեորայի» արծարծած պրոբլեմների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի հունական ազգային-ազատագրական շարժումներին անդրադառնալը։ Իր առաջին համարում (1893 — 134) պարբերականը «Նոր Հունաստան» խորագրի տակ տեղավորել է նյութեր այն պայ-

քարի մասին, որ 1790—1800-ական թթ. մղել է հույն ժողովրդի մի հատվածը թուրքական զավթիչների դեմ, տվել այն հերոսների դիմաստվերները, որոնք աչքի են ընկել այդ ազատագրական պայքարում: Արտաբուստ թվում է, թե պարբերականը մի սովորական գործ է կատարել, բայց երբ խորամուխ ենք լինում նյութի բովանդակության մեջ, պարզում նրա տպագրության մի հետապնդված նպատակը ակնհայտ է դառնում, որ պարբերականն ու նրա հրատարակիչը սուլթանական թուրքիայի պայմաններում մի խիզախ քայլ են արել:

Հույն հեղինակ էմմենիցի առաջին պատմական ակնարկը նվիրված է հունական ազգային հերոս Ֆոթոս Ցավելասի գլխավորությամբ ծավալված շարժմանը: Ալի-Փաշայի՝ թուրքական այդ զավթիչի դեմ լեզենդար սուլեղիների մղած ազգային-ազատագրական շարժումը անկախության ու ազատության համար խիզախարար ու մոլեռանդ նվիրվածությամբ մարտնչելու մի հիմնադրի օրինակ է: Շատ ժամանակներ առաջ թուրքական զավթիչները տիրել են սուլեցիների բերրի բնակավայրերին: Օտար զավթիչների լծի տակ շրջակայում համար սուլեցիները թողել են իրենց հայրենի հարթավայրերը և ամրացել բարձրադիր անմատչելի լեռներում: Խիզախ ժողովուրդ լինելով, նրանք երկարամյա պայքարի ընթացքում կարողացել են մնալ անկախ: Ստրատեգիական հսկայական նշանակություն ունեցող նրանց բարձունքներին տիրելու համար Ալի-Փաշան տեղական կռիվներ է մղել ազատաւեր ժողովրդի դեմ: Երկար ժամանակ նրան չէր հաջողվում ընկճել փոքրաթիվ լեռնականներին: Միայն խաբեությամբ ու նենգությամբ թուրքական փաշային հաջողվում է 1803 թ. ոտք դնել Սուլիի «սարսափելի հողը», սրի քաշել հերոս սուլեցիներին՝ տղամարդկանց ու կանանց, երեխաներին ու ծերերին: Դաժան ու անհավասար պայքարում պարտվեց Սուլին, բայց շրնկճվեց ազատասենյ սուլեցիների մարտական ոգին: «Արյունարբու փաշայի» հետապնդումներից ազատված սուլեցիների ոչ մեծ խմբերը տարիներ հետո իրից ելան օտարերկրյա զավթիչների դեմ, միավորվեցին ազատագրական պայքարի ելած հունական ժողովրդի հետ և ազգային-ազատագրական շարժման պատմության փառավոր տարեգրության մեջ արժանի տեղ գրավեցին, իրենց շարքերից ծնունդ տվեցին ազգային լեզենդար հերոսների, որոնց հիշատակն այսօր էլ հարգվում է:

«Մետեորայում» տպագրված «Ֆոթոս Ցավելաս» ակնարկում պատմվում է անկախության համար սուլեցիների ծավալած այդ պայքարի միայն առաջին փուլի մասին: էմմենիցի այդ պատմա-գեղարվեստական ակնարկում վառ ու անմոռանալի գույներով են տրված ազատագրական պայքարի դրվագները, առանձին հերոսների դիմաստվերները: Ընթերցողի վրա անջնջելի տպավորություն են թողնում դուրյազնաբար մարտնչող սուլեցիները, նրանց քաջարի ղեկավարները՝ Ցավելասն ու Սամվել քահանան, Սուլիի կանայք, որոնք տղամարդկանց հետ միասին հերոսաբար մարտնչում են թշնամու դեմ: Հեղինակը զուգահեռաբար տվել է նաև նենգ ու խաբերա Ալի-Փաշայի կերպարը, նկարագրել զավթիչների վայրագություններն ու բարբարոսությունները:

Թուրքական բիրտ լծի տակ անողորմաբար հարստահարվող հայ ընթերցողին խորապես հարազատ էին հունական ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները: Համիդյան գրաքննության «ըզլտիչ ճիրաններեն» դուրս արժնելով, հայ պրոգրեսիվ մամուլի էջերն է թափանցել հայրենասիրության, պայքարի կոչ անող մի վառ երկ, որի նշանակությունը բավականաչափ մեծ է:

Պարբերականը Հունաստանի նոր պատմությանը նվիրված պատմական ակնարկին կցված Իսխարանում խոստանում է ընթերցողներին պատմել նաև թուրքական զավթիչների դեմ հույն ժողովրդի մղած պայքարի հաջորդ էտապների, մասնավորապես ազգային-ազատագրական շարժումների երկու այլ ակնաւոր հերոսների՝ Մարկոս Բոցարիսի ու Անդրեյ Միաուլիսի մասին: Բայց արդեն ուշ էր: Սուլթանական գրաքննությունը արգելել է հաջորդ երկու պատմական ակնարկների տպագրությունը: «Մետեորայի» հետագա համարներում մենք այլևս չենք գտնում Հունաստանի նոր պատմությանը նվիրված նյութեր, շնայած հանդեսի խոստմանը:

«Մետեորան» անդրադարձել է ժամանակի այն հրատապ խնդիրներին, որոնք զբաղեցնում էին հայ մտավորականներին: Այդպիսի խնդիրներից էր մասնավորապես հայկական հարցը: «Մետեորան» այդ հարցը քննարկել է արևելյան հարցի հետ սերտորեն առնչված, իր պատմական ընթացքի մեջ, համակողմանի «Արևելյան խնդիր — հայկական խնդիր» խորագրով Մ. Նուպարյանի հոդվածը, որ նվիրված էր այդ հարցին, տեղավորված է պարբերականի առաջին և երկրորդ հատորներում: Դա մի ընդարձակ ուսումնասիրություն է, որ նմանօրինակ նյութերի մեջ աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ և կարող է հետաքրքրել դեռևս լրիվ չուսումնասիրված հայկական հարցով և արևմտահայ հասարակական մտքով զբաղվողներին: Այս «խղճամիտ» ու-

սումնասիրությունը, որին պարբերականը հատկացրել է մոտ 90 էջ, արժանացել է ժամանակակիցների ուշադրությանն ու բարձր գնահատությանը:

Մեսրոպ Նուպարյանը քննարկել է արևելյան խնդիրը և, նրա հետ կապված նաև հայկական հարցը: Պարբերականի այս գլխավոր աշխատակցի արտահայտած մտքերին լիովին համամիտ էր Դ. Մսերյանը: Նա Նուպարյանի հոդվածը երկու առանձին մասերով տպագրել է իրեն առաջնորդողները:

Արևելյան խնդիրը՝ գործյան այդ հանգույցը առաջացել է, ինչպես շեշտում է Մ. Նուպարյանը, օսմանյան գավազանի տակ ընկած «մեծագույն մասամբ իրենց հայրենի հողին վրա գտնված» ժողովուրդների ինքնավարության հասնելու ձգտումներից, այն «վարչական անկարգությունների և անկանոնությունների», այն «վատթար մատակարարության և բազմադիմի գեղծումների» հետևանքով, որոնք տեղ են գտել սուլթանական Թուրքիայում: Դրան նպաստում են նաև «ամեն օր ամենն դաշթակղելի եղանակներով» կատարվող «տեղական հարստահարությունները և ազգի ազգի զեղծումները», «վարիչ մարմն: ապիկարությունը և վատթար կազմավորությունը»: Այդ բոլորը «ժողովուրդներու ցասումը և դժգոհությունը կգրգռեն կենտրոնական կառավարության դեմ»: «Արդի առաջադիմության ծնունդ» հանդիսացող «ազատական և հավասարական այդ գգացումներն» արտահայտվում են պարբերաբար կրկնվող խռովությունների ու ապստամբությունների ձևով: «Տառապելն ձանձրացած» հպատակ ազգությունները վերջիվերջո «ինքնավարության, և ոմանք նույնիսկ անկախության գաղափարներ սկսած են տածել»:

Արևելյան խնդիրն իր արտաքին պատճառներն էլ ունի. խոշոր տերությունների «էական և կենսական շահերը» բխվում են Օսմանյան պետության շահերի հետ: Դրա հետևանքով պարբերաբար պատերազմներ են առաջանում: Նուպարյանը քննադատության է ենթարկում խոշոր տերությունների գաղութային քաղաքականությունը:

Նշելով Օսմանյան պետության քայքայման պատճառները և մատնանշելով, որ արևելյան հարցը մեծ տերությունների կողմից իբեցեց գաղութատիրական քաղաքականությունը քողարկելու մի պատրվակ է սոսկ, Նուպարյանը բնավ չի կանգնում Թուրքական կայսրության ամբողջությունը պահպանելու դիրքերում, ինչպես դա կարող է թվալ առաջին հայացքից: Սուլթան Համիդ II-ի ժամանակաշրջանի Թուրքիայում հանդես եկող հրապարակախոսը զրկված էր իրեն հուզող մտքերը բացեիբաց արտահայտելու հնարավորությունից և ստիպված էր արտաքուստ ռեվերանս անել ատերի իշխանության առաջ, իր հայացքներն արտահայտել եզովպոսյան լեզվով: Դա հատկապես երևում է հոդվածի երկրորդ մասում, որն ամբողջապես նվիրված է հայկական հարցին:

Խոսելով հայ ժողովրդի պատմական ճակատագրի մասին, Նուպարյանը նկարագրում է նրա «սև բախտը», մատնանշում, որ նա «զանազան նեղությամբ և հարստահարությանց ներքև կճնշվի մինչև ցայսօր՝ այնպիսի դժբախտ երկիրներու մեջ, ուր աղքատություն, խեղժություն և տգիտություն ընդհանուր և ցավալի կերպով մը կտիրեն»: «Ապահովություն և խաղաղ զարգացում» — այս է ըստ Նուպարյանի, «նյութական հացի խնդրով» զբաղվող հայերի «անկապտելի և անժխտելի իրավունքը»: Հայը կարիք ունի «անդորր և ապահով վիճակ մը գտնելու՝ որ կարող ընեն գինքր իր քրտնաց ու վաստակաց արդյունքը եղող հացը խաղաղությամբ ուտել և անդորր զարգացում մ'ունենալ...»: Դրա համար նախ և առաջ հայր պետք է «կյանքի, պատվո և ընչից ապահովություն» ունենա:

Հայկական հարցը դարձել է «հայկական հարստահարությանց խնդիր», «հայոց զրկողությանց դատ»: Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը «ետին աստիճանի ուրախալի և նշանակալի» մի նվաճում է: Դա ձեռք է բերվել ռուսական կառավարության հոգատարությամբ: Նուպարյանը բանավիճում է նրանց դեմ, ովքեր չեն հասկանում Ռուսաստանի կատարած մեծ դերը: Նրա ուշադրությունից չի վրիպում նաև հայկական հարցում Անգլիայի վարած երկդիմի քաղաքականությունը, որը բխում է «արևելյան գոտիի մեջ Տաճկական Ափո կողմեն Ռուսաստանի սահմանին անմիջապես կից՝ ժողովուրդ մ'իր կողմը շահելու և զայն իր քաղաքականության հարելու կարևոր դատած պետքեն»: Անգլիան ուզում է «հայկական պատրվակը իրեն զենք ունենալ» և այն գործադրել իր պլաններն իրագործելու ժամանակ: Նմանօրինակ վերաբերմունք ունի Նուպարյանը նաև մյուս պետությունների նկատմամբ: Նա «միամիտ և շափազանց լավատեսություն» է համարում այն դատողությունը, թե եվրոպական տերությունները հայկական հարցին նպաստելու համար, կամ Հայաստանի բարեգործության համար «իրենց նյութական աջակցությունը նվիրելու պատրաստ կամ տրամադիր ըլլան՝ ի պահանջել հարկի»:

Հայկական հարցի լուծման համար Նուպարյանն առաջադրում է իր յուրահատուկ տեսակետները, որոնք արևմտահայ իրականության որոշակի շրջանների մտայնության կնիքն են կրում:

«Ազգային վերածնությունը ազգովին կսկսի», — գրում է Նուպարյանը և ավելացնում. «Մեր ազգային զարգացումին համար օտարներն սպասելիք բան մը չունին»։ Հայ ժողովուրդը պետք է իր միջոցներով, իր ուժերով հասնի փրկության, հույսը դնի միայն ինքնօգնության վրա և հաղթահարի «առաջադիմությանը խափանարար եղող ամեն խոչ ու խուժ»։ Քիչ հետո Նուպարյանը առաջարկում է ամրապնդել ընկերակցության ոգին, ստեղծել ընկերություններ և ապահովել դրանց գոյությունը։ Նուպարյանը չի ասում, թե կոնկրետ ինչ ընկերություններ նկատի ունի, բայց ընդգծելով դրանց նշանակությունը, ավելացնում է. «Որևէ ընկերության, որ զինվոր գրվին՝ անոր առաջադրած նպատակին սուրբ հրով պետք է վառված ըլլա սրտերնիս, այդ սուրբ հուրը կրնա միայն տալ այն բուռն եռանդը և հարատևող ուժը, որ զմեզ զոհության պիտի առաջնորդե, հաղթելով գժվարությանը և ժամանակն ծագած անխուսափելի թուլությանը»։ Խոսքը նրանց ուղղվելով, ովքեր չեն հավատում ազգի ուժերին, ժխտում են ընդհանուր-միասնական եռանդը գործի կոչելու անհրաժեշտությունը, Նուպարյանն ուղղակի ասում է. «Այս առթիվ միանգամայն ընդմիշտ բուլբուլին անընդունելի կճանչնանք և կհրատարակենք ազգային շարժման կարևորությունը նվազեցնելու դիտմամբ ումանց կողմն առաջ բերած» կարծիքը։

«Հայեր, — կոչ է անում Նուպարյանը, — ժամանակ է որ սթափինք, ժամանակ է, որ շարժինք, ժամանակ է, որ գործենք, փուճ ժամանակներ շատ և շատ կորսած ենք, հարկ է, որ դարձանենք այդ կորուստը։ Հեռի մեզմե օձտում և կրոնական խտրություն... Միանանք իրարու հետ, լճոր ձեռքի տանք ազգին նախքան առաջնորդելու համար՝ համազգային և զբաղակցություն մը հաստատենք...»։

Արևմտահայ գործիչն այստեղ չի տեսնում հայ ազգի մեջ առաջացած դասակարգային շերտավորումը, նրան հետաքրքրողն ամբողջ ազգն է, նրա վիճակի բարելավումը, նրան առաջընթացի ուղի գուրս բերելը։ Այդ նպատակի համար նա կոչ է անում հետևել ուսուսական հզոր տեղության շնորհիվ փրկված արևելահայության օրինակին, օգնել նրան ու գուշակում է, թե նրա համար «չեղ ապագայի մը սահմանված կեցի»։ Հնարավորություն չունենալով ուսուսական օրինատացիայի մասին ազատորեն խոսել, նա բավական բացահայտ ձևով գրում է. «Եթե հայության զարգացումը կուզենք՝ մեր ուղադրությունը Հայաստանի մեր եղբայրք վրա դարձնենք, հայեր, որք իրենց հայրենի հողին վրա կգտնվին և իրենց հոծ դիրքովը մեր ազգության բունը և քաղաքականապես կարևոր մասը կներկայացնեն, անոնց մտավոր և բարոյական զարգացումին փուլթ և ջանք ունենանք»։

1877—78 թթ. ուսումնական տարեկանը ավարտելուց հետո, մասնավորապես, Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը երևան գալուց հետո, Նուպարյանը շատերի պես չէ կորցնում հույսը, այլ հավատում է, թե երբևիցե հայ ազգի համար «լավագույն վիճակ» կստեղծվի և այս անգամ առաջ է քաշում ոչ թե լուսավորական խնդիրներ, այլ դնում է ժողովրդի «կյանքի և իրավունքներու նյութական ապահովության» հարցը, այն դիտելով իբրև զարգացման, վերաշինության ու «բարոյական վերակազմության» առաջին պայմանը։ Ոչ մի լուսավորություն, հիմնավոր առաջադիմություն, բարոյական ոչ մի շարժում չի կարող ծնվել ունենալ, քանի ղեռ կենսական առաջնություն ստացած «Հայաստանյայց հայոց հարստահարությանը խնդիրը», որ կյանքի, մահու, հացի, պատվի խնդիր է, չի լուծված։

«Մետևորայում» Նուպարյանի տպագրած մյուս խոշոր աշխատասիրությունը Գյոթեի «Ֆաուստի» առաջին մասի թարգմանությունն է։ Առաջին անգամը չէ, որ հայ մտավորականները դիմում են գերմանական հռչակավոր գրողի ստեղծագործություններին։ Արևմտահայ ընթերցողները առանձին գործով հրատարակված «Լեռնային» ծանոթ էին դեռևս 1868 թ. Նուպարյանից մի փոքր առաջ հայ ընթերցողները արդեն ծանոթ էին «Ֆաուստի» բովանդակությանը (Թ. Թերզյանի փոխադրությամբ)։ «Ֆաուստի» թարգմանությունը Արևելյան Հայաստանում, ինչպես նրա առանձին հատվածները, այնպես էլ ամբողջությամբ վերցրած, կատարվել է ավելի ուշ։ Այսպիսով, Նուպարյանը փաստորեն հանդիսանում է Գյոթեի հանճարեղ երկի առաջին թարգմանիչը։ «Ֆաուստի» առաջին մասի ամբողջական թարգմանությունը լույս է տեսել «Մետևորայում», որի «հանկարծական քմահաճ խափանմամբ» էլ ընդհատվել է Գյոթեի երկի թարգմանության տպագրությունը։ Հետագայում Նուպարյանը փորձեր է արել «Ֆաուստի» ամբողջական թարգմանությունը առանձին երկով հրատարակել, բայց այդ նրան չի հաջողվել։ Ապարդյուն են անցել նաև Թիֆլիսում հրատարակելու փորձերը և միայն Համիդ 11-ի տապալումից ու Թուրքիայում երկու կոնստիտուցիա հռչակվելուց հետո՝ 1910 թ. Քեշիշյան տպարանում (Չմյուռնիա) լույս տեսավ հանճարեղ գրողի երկը՝ Մ. Նուպարյանի թարգմանությամբ և ընդարձակ նախաբանով։

Նուպարյանը թարգմանությունը կատարել է իրավամբ ամենից հաջողը համարվող ժերար դը Ներվելի ֆրանսերեն հայտնի թարգմանությունից, որն արժանացել է Գյոթեի ջերմ հավանության։

նրա Այդ թարգմանության մասին 'Դյոթեն նկատել է՝ «թեև մեծ մասամբ արձակ գրված՝ այլ, սակայն, շատ լավ հաջողած էր» և որ ինքն այլևս չի ցանկանում «Ֆաուստը» գերմաներեն կարգայ, քանի որ կա ֆրանսերենը: Դյոթենի դիմելու կարևորությունն ու անհրաժեշտությունը թարգմանիչն ընդգծում էր իր ընդարձակ նախաբանում, որը, եթե չենք սխալվում, գերմանական մեծ գրողին մեզանում տրված առաջին ընդարձակ գնահատականն է: Նրանում նուպարյանը հատկապես նշում է Դյոթենի մահվանից առաջ նրա արտասանած «Լույս, միշտ սվելի լույս» խոսքերը և նրան համարում է «վեհ ու մեծ մարդ», որը «միշտ աշխատած էր լավագույնը ևս տեսնել ու հասկանալ», ձգտում էր «ճանչնալ դաշխարհ»: Նախաբանում նշվում է, որ հայ ընթերցողին անհրաժեշտ է ծանոթացնել «Ֆաուստի» պես «անմահ ու եզակի թատերերգության պատմության արժանակատի մաստներուն և ունեցած գրական բարձր արժեքին»: Այդ անելու իրավունքը նուպարյանն իրեն թողնելով, խոստանում է դա անել «Մետեորայի» հետագա համարներից մեկում:

«Հավատարմությամբ ու խղճմտությամբ» է թարգմանիչը ձեռնամուխ եղել գործին, բայց համեստարար գրում է, որ շատ ավելի «արժանավոր» գործ կլինի արված, եթե «օրին մեկը հայ գրագետ մ'ենեկ նույնիսկ Կեոթեի բնադրեն անմիջական կերպով «Ֆաուստը» թարգմանեն»: Թարգմանությունը կատարելիս նուպարյանը համադրել է «Ֆաուստի» այլ լեզուներով կատարված թարգմանությունները և ճշտել «միևնույն ու անհասկանալի» տեղերը: «Իմ նշանաբանս եղած է, — ասում է թարգմանիչը, — հավատարիմ ճշգրտություն հեղինակին ամեն իմաստներուն»:

Թարգմանությանը կցած իր նախաբանում նուպարյանը, որն իդեալ երաժշտության մեծ սիրահար էր և նվագում էր դաշնամուրի վրա, իր խոսքն է ասում նաև «Ֆաուստ» օպերայի մասին: Օպերան ստեղծված է «այնպիսի հազվագյուտ ճարտարությամբ և աննման քաղցրությամբ, որ մեծ և անկորնչելի համբավ մը ստացած է երաժշտական աշխարհի մեջ»: Այդ օպերան «ապշում ու զմայլում կպատճառե առհասարակ ամեն ունկնդրի՝ ինչ դպրոցի կամ դրոշի որ ծառայի նա»: Այստեղ նա նշում է նաև այն մասին, որ Պոլսի մի հայ գրագետ ևս «Ֆաուստի» վրա երաժշտություն է դրում, որը «խիստ դժվար է, չըսենք անհնարին»: Թե ում նկատի ունի Մ. նուպարյանը, մեզ հայտնի չէ:

Արևմտյան գործիչների նկատմամբ պարբերականի ունեցած վերաբերմունքի տեսակետից ուրույն նշանակություն ունի «Մետեորայում» տպագրված է. Զոլայի (է. Զ.) հոդվածը «Վ. Հյուգոն և էմիլ Լիթթեն» խորագրով: Այս հոդվածը գրված է Լիթթենի մահվան առթիվ: Նրանում գուցահեռ է անցկացվում երկու մեծ ֆրանսիացիների միջև՝ մեկը գրող, բանաստեղծ, հրապարակախոս, մյուսը՝ հռչակ վայելող բառարանի հեղինակ, լեզվաբան, փիլիսոփա: Զոլան նախապատվությունը տալիս է գիտնական Լիթթենին, իսկ ուսմանտիկ Հյուգոյին իր վերջին գործերի համար քննադատում է:

Հոդվածին կցված անստորագիր նախաբանում Մսերյանը դրսևորում է իր անհամաձայնությունը Զոլայի հետ, վերապահումներ անում և նույնիսկ ակնարկում իր մտադրության մասին՝ հետագայում անդրադառնալ այդ հարցին. մի բան, որը նրան, դարձյալ հանդեսի փակման պատճառով, չհաջողվեց: «Հյուգոն, — գրում է նախաբանի հեղինակը, — անշուշտ է և կմնա քերթողական անհավասարելի հանճար մը, վսեմ հոգևոր մը, որու բերնին մեջ ամեն մի բառ կզորանա, կընդարձակվի ու կորոտա եռափող շոինդե ելնող ահեղ ձայնին պես, բայց վերջապես փող, շոինդ ու քնառ մեր իրական պիտոյից չեն բավեր, ուրիշ սնունդներու ալ պետք ունինք, զորս ժամանակ է ալ փնտրելու: Չմոռանալու է, որ Աթենաս մը կա Ապոլոնե վեր...»: Մսերյանը պարզապես ցանկանում է ընդգծել գիտնականների և գիտության դերը: Լիթթենի երկրպագուն լինելով և նրա գիտական, բանասիրական գործունեությունն էլ բարձր գնահատելով, Մսերյանը միայն ու միայն ցանկանում է ընդգծել ժամանակակից հասարակական կյանքում գիտությունների օր օրին աճող դերը: Եվ որպեսզի ընթերցողն իրեն սխալ չհասկանա, նորից է ընդգծում Հյուգոյի մեծությունը. «նորահրաշ պետք է երևի աննման բանաստեղծը նսեմացած տեսնել աննման գիտունի մը քով՝ որու անունը իսկ թերևս շատերու անծանոթ էր, մինչդեռ Հյուգո ամեն հայ դպրոցականի բերնին մեջ է, ամեն հոգվածի վերև, կրնաք ըսել ամեն հայ գրողներու մտքին մեջ, վասն զի նա թե՛ իբրև փիլիսոփա, թե՛ իբրև բանաստեղծ, թե՛ իբրև տիեզերական գիտուն, լերջապես իբրև գարուս առաջին մարդը նկատված և, ինչպես կրսե էմիլ Զոլա, կրոն մը դարձած է»:

«Մետեորայում» ղգալի տեղ են գրավում բնագիտական-փիլիսոփայական թեմաներով տպագրված նյութերը: Դրանք զխավորապես դրված են պոզիտիվիստական ոգով:

Կոնտի ուսմունքի հայ հետևորդների, այդ թվում նաև Դ. Մսերյանի աշխարհայեցողության հարցը կարոտ է մանրակրկիտ ուսումնասիրության: Կոնտը շգալի ազդեցություն է թողել ոչ միայն իր ժամանակակից, այլև հետագա շրջանի շատ գործիչների, մանավանդ բնագետների

իրաւ Դա գլխավորապէս բնական գիտութիւնների բուն զարգացման և նրանց արդյունքների տեսական ընդհանրացման ուղղութիւնով կատարված զեգերումների հետևանքն էր:

«Մետեորա» պարբերականը արևմտահայ հայրենասիրական, իր ժամանակի առաջավոր հոսանքի օրգանն էր, որը նպատակ ուներ լուսավորել արևմտահայութիւնը, դուրս բերել նրան կրօնական, միստիկական մշտնջեղ և հաղորդակից դարձնել գիտութիւն նվաճումներին: Մտերյանի և Նուպարյանի հենարանը արևմտահայ, մասնավորապէս զմյուռնահայ դեմոկրատական զանգվածներն էին, նրանց էր ուղղված այդ գործիչների խոսքը, որը, սակայն, չհնչեց իր ամբողջ թափով, որովհետև տիրող դժուար պահանջարկի դժվարութիւն էր ստեղծել հասարակական-քաղաքական գործունեութիւն համար:

ЖУРНАЛ «МЕТЕОРА»

М. Н. АКОПЯН

(Р е з ю м е)

Издававшийся в 1880—1883 годах в гор. Измире (Турция) журнал «Метеора» отражал взгляды передовой армянской интеллигенции восьмидесятых годов XIX в. Журнал ставил перед собой задачу «быть откликом современного духа и европейского научного движения».

На страницах «Метеоры» подвергались острой критике деятели католической церкви. В связи с этим был опубликован перевод сатирического романа известного греческого писателя-публициста Эм. Рондиси «Паписса Ионна».

Большое место в «Метеоре» занимает статья, посвященная т. н. Восточному, а в связи с этим и армянскому вопросу. Рассматривая его в историческом разрезе, автор статьи М. Нупарян подвергает критике захватническую политику «великих» держав и призывает армян сплотиться для борьбы за осуществление своих национальных чаяний.

Нупарян первым перевел на армянский язык и опубликовал в третьем номере журнала первую часть знаменитого «Фауста». К переводу он приложил подробное предисловие, в котором характеризует великого Гете и, в частности, его драму.

В «Метеоре» опубликована статья Эм. Золя «В. Гюго и Эм. Литтре». В ряде других статей отмечены достижения естественных наук, их большое значение.

«Метеора», как научный журнал и как орган молодых прогрессивных западноармянских мыслителей 80-х годов, занимает особое место в истории армянской периодической прессы.